

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ
ԳԱՎԱՌՈՒՄ 1918-1920թթ.

1918 թվականի դեկտեմբերին թուրքերի հեռանալուց հետո Ալեքսանդրապոլի գավառի իշխանությունները ձեռնամուխ են լինում կրթական գործի կազմակերպմանը: Առաջնային նշանակություն է տրվում հատկապես դպրոցին: ՀՀ Խորհրդարանը դպրոցական գործը վերականգնելու և դպրոցը քաղաքականությունից հեռու պահելու նպատակով 1918թ. սեպտեմբերի 11-ին օրենք էր ընդունել, որի հիմքում ընկած էր դպրոցի կառավարման հասարակական սկզբունքը: Այդ օրենքով դպրոցը ՀՀ պետության մենաշնորհը չէր համարվում և ընդունվում էր ազատ դպրոցական համակարգը: Պետական գանձարանից նպաստ ստացող դպրոցները հանձնվում էին հանրային կրթության նախարարին, տեղական ինքնավար մարմիններին, դպրոցական շրջանային տեսուչներին, դպրոցների մանկավարժական խորհուրդներին, ավագ ուսուցիչներին և հոգաբարձուներին:¹ Փաստորեն հանրապետության տարածքում գործող նախկին պետական, եկեղեցական-ծխական և այլ տիպի դպրոցները հնարավորություն էին ստանում ազատ գործելու: Միաժամանակ օրենքը լուրջ ֆինանսական դժվարությունների առաջ էր կանգնեցնում դպրոցներին դպրոցաշինության, գրեմական պիտույքների ու դասագրքերի հայթայթման և ուսուցիչների աշխատավարձերի վճարման հարցերում:

Ալեքսանդրապոլում 1918 թվականի հոկտեմբերից գործում էին ս. Փրկչի վիճակային, Արդուքյան օրիորդաց և ս. Լուսավորչի «Խրիմյան» դպրոցները: Ալեքսանդրապոլի թեմակալ առաջնորդ Արտակ վարդապետի Երևանի փոխթեմակալ Խորեն եպիսկոպոսին ուղղված զեկուցագրում նշվում է, որ ս. Լուսավորչի Խրիմյան դպրոցի հոգաբարձությունն աղքատ է և առանց պետական նպաստի ուսուցիչներին աշխատավարձ տալ չի կարող: Հայտնելով այս մասին, Արտակ վարդապետը խնդրում է Խորեն եպիսկոպոսին՝ այս դպրոցները ևս հաշվի առնել պետությունից նպաստ խնդրելու դեպքում:² Ինչ վերաբերում է Արդուքյան օրիորդաց դպրոցին, ապա 1918թ. հունվարի 23-ին Գևորգ Ե կաթողիկոսին ուղղված դպրոցի հոգաբարձության խնդրագրում հայտնվում է, որ խնդրել են Ալեքսանդրապոլի Քաղաքային վարչությունից՝ քաղաքապատկան ազատ հողամասերից մեկը ձրիաբար հատկացնել դպրոցի կառուցվելիք շենքի համար: «Ի պատասխան հոգաբարձութան այս դիմումի,- ասվում է խնդրագրում,- քաղաքային վարչությունը իր դեկտեմբերի 16-ի N 314 գրութեամբ յայտնում է, որ Քաղաքային խորհուրդը՝ նոյեմբերի 23-ին կայացած իր նիստում որոշել է՝ Երևանեան փողոցի վերայ, քաղաքի Կենտրոնում, Սուրբ Աստուածածին եկեղեցուն մօտիկ գտնւած ազատ հողամասը (669,4 քառ. սժ.) յատկացնել Արդուքեան դպրոցի նոր շէնքին այն պայմանով, որ դպրոցիս հոգաբարձութիւնը շէնքի կառուցումը ձեռնարկէ հինգ տարւայ ընթացքում և աւարտէ այն՝ հողամասը նւիրաբերելու օրից հաշւած՝ իօթը տարւում: Կառուցւած շէնքը ընդմիշտ յատկացւելու է վերոյիշեալ դպրոցին, հակառակ դէպքում, ինչպէս և նշանակւած ժամանակամիջոցում շէնքի կառուցումը չձեռնարկելու կամ չաւարտելու դէպքում, քաղաքը իրաւունք կունենայ հողամասը յետ գրաւելու»:³ Հայտնելով այս մասին՝ հոգաբարձությունը խնդրում է կաթողիկոսի օժանդակությունը այդ մեծ գործը սկսելու համար:⁴ 1918թ. փետրվարի 5-ին Ալեքսանդրապոլի Արդուքյան Օրիորդաց դպրոցի հոգաբարձությանը գրած պատասխանում կաթողիկոսի դիվանն հայտնում է, որ. «Մ. Աթոռի ներկայ անձուկ վիճակը ոչ մի հնարատրութիւն չի տալիս որևէ օգնութիւն հասցնել դպրոցի շինութեան գործին. այդ մասին պետք է հասարակական լայն հանգանակութեան դիմել Ալեքսանդրապոլի վիճակում»:⁵

¹ ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.86, ք.4:

² Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք 9, Ե. 1997, ք. 158-159:

³ ՀԱԱ, ֆ. 57, ց.2, գ. 1135, ք.1:

⁴ Նույնը:

⁵ Նույն տեղում, ք. 2:

Դպրոցների իրավասությանն էր հանձնվում նաև դասագրքերի ձեռք բերման գործը: 1919 թ. հուլիսի 9-ին Արդության դպրոցին ուղարկված շրջաբերականով հանրային կրթության և արվեստի նախարարը դպրոցի վարչությանը խնդրելով տեղեկացնել, թե ինչ դասագրքերի կարիք է զգում դպրոցը և ինչ քանակով, միաժամանակ նշում է. «Մինիստրությունս սակայն անհրաժեշտ է համարում բացատրել, որ Մինիստրութեան հոգատարութիւնը դպրանոցի վարչութեանը չի ազատում անհրաժեշտ դասագրքեր և այլ պիտոյքները Ձեր սեփական միջոցներով հայթայթելու պարտականութիւնից»:⁶

1919թ. օգոստոսին Հայաստանի Հանրապետության նորընտիր կառավարությունը Ա. Խատիսյանի գլխավորությամբ ձեռնամուխ է լինում կրթության բնագավառում արմատական բարեփոխումների իրականացմանը: Մասնավորապես նախատեսվում է սկզբնական կրթությունը դարձնել ընդհանուր, պարտադիր ու ձրի, զարկ տալ հատկապես պոֆեսիոնալ կրթությանը, պետականացնել եկեղեցական-ծխական դպրոցները, մտցնել դպրոցների հաջորդականություն և միասնականություն, ամեն կերպ քաջալերել դպրոցների և այլ հաստատությունների բացման գործում մասնավոր նախաձեռնությունը: Ալեքսանդրապոլի քաղաքային ինքնավարությունը և մասնավոր քաղաքագլուխ Հ. Մելքոնյանը մեծ աշխատանք են կատարում կառավարության կրթական քաղաքականության իրականացման համար: Ալեքսանդրապոլի քաղաքային վարչության՝ 1919թ. հոկտեմբերի 27-ի քաղաքային խորհրդին ուղղված դպրոցական գործը կազմակերպելու վերաբերյալ զեկուցման մեջ պաշտպանվում են պրակտիկ, տարրական պարտադիր և երկսեռ, արտադպրոցական տարիքի երեխաների և որ կարևոր է՝ շարունակական կրթության գաղափարները: «Ներկայ դեմոկրատիկ ինքնավարութեան պարտականութիւններից մեկն էլ հանդիսանում է, - մասնավորապես ասված է այդ զեկուցման մեջ, - դպրոցական գործը ուղիղ հիմքերի վրայ դնելը: Դրա համար անհրաժեշտ է ստեղծել այնպիսի պայմաններ, որի մեջ մանուկ սերունդը հնարավորութիւն ունենայ բարգավաճել և պատրաստել առողջ մտքով այնպէս, որ գործնականի հետ ծանօթանալով, պատրաստի պրակտիկ կեանքի համար»:⁷ Ձեկույցում առաջ է քաշվում նաև տարրական պարտադիր կրթության գաղափարը: Չափազանց անհրաժեշտ է համարվում հատուկ ուշադրություն դարձնել նաև արտադպրոցական տարիքի երեխաների ուսումնառությանը: Այդ նպատակով առաջարկվում է ստեղծել առանձին դպրոցներ՝ «մանկական պարտեզներ» երկու սեռի երեխաների համար: Այս հանգամանքը կարևորում էր նրանով, որ սա հիմք կարող էր հանդիսանալ հետագայում երկսեռ տարրական դպրոցներ բացելու համար: Բացի այդ՝ ապահովվում էր կրթության հաջորդականությունը: Կարևորում էր հատկապես մանկական պարտեզների բացման դաստիարակչական և սոցիալական նշանակությունը: Համարվում էր, որ դրանց բացմամբ երեխաները կկտրվեն փողոցից, և կդրվի նրանց առողջ դաստիարակության հիմքերը, իսկ ծնողներն երեխաներին տեղավորելով մանկապարտեզներում կկարողանան աշխատանքի անցնել և բարելավել իրենց նյութական վիճակը: Հետաքրքիր էր նաև մանկապարտեզների առաջարկվող ծրագիրը, որը ներառում էր ձեռարկեստ (նկարչություն), երգեցողություն, երաժշտություն (նվագակցություն և պարեր), մարմնամարզություն, նախապատրաստական գրույց-դասեր, խոսակցություն և լեզվի զարգացում, ծանոթություն բնության հետ, մանկական պատմվածքների ընթերցանություն, զբոսանք և խաղեր ու նախնական թվաբանություն:

Քաղաքային վարչությունը ենթադրում էր բաց անել սկզբում չորս մանկական պարտեզներ, որոնց ծախսը կլիներ տարեկան մոտավորապես 220000 ռուբլի: Հաճախող մանուկների համար առաջարկվում էր ամսական 100 ռուբլի վարձ, աշակերտության 50%-ին ընդունել ձրի, այնպես, ինչպես որոշված էր քաղաքային դպրոցների համար: Ուսումնավարձից ստացած փողով վարչությունը նախատեսում էր մանուկների համար կազմակերպել այդ տարիքի երեխաների համար շատ անհրաժեշտ նախաճաշ: Մույն զեկույցը ներկայացնելով քաղաքային խորհրդի բարեհաճությանը՝ վարչությունը ենթադրում էր, որ խորհուրդը կընդունի այն իր բոլոր մասերով հաստատող որոշում, ինչպես նաև կմիջոցառի հանրային կրթության մինիստրի առաջ քաղաքային ինքնա-

⁶ ՀԱՍ ֆ. 18, ց. 1, գ. 9, ք. 10:

⁷ ՀԱՍ ֆ. 105, ց. 1, գ. 2776, ք. 4-5:

վարությանը տրամադրելու 200000 ռուբլի և չսպասելով մինչև հիշյալ գումարի ստանալը, կառաջարկի վարչությանը անմիջապես անցնել մանկական պարտեզների բացմանը:⁸ Քաղաքային Խորհրդի 1919 թ. հոկտեմբերի 29-ի նիստը որոշում է հաստատել քաղաքում 4 մանկապարտեզ բացելու վերաբերյալ վարչության որոշումը և հանձնարարել վերջինիս միջնորդել կառավարության առաջ 22 հազար ռուբլի փոխանցելու համար և առանց սպասելու այդ գումարը ստանալուն, բացել մանկապարտեզները:⁹

Կրթական գործին աջակցում էին նաև Ալեքսանդրապոլի հասարակական կազմակերպություններն ու ընկերությունները: Այսպես՝ «Արտադարձակական զարգացման ընկերությունը» 1919թ. նոյեմբերին Քաղաքային Խորհրդին ուղղված նամակում առաջարկում է կազմակերպել մանկական ակումբներ, ստեղծելով «անհատապես բազմակողմանի զարգացած առողջ քաղաքացի՝ խոր հասարակական հայացքներով»:¹⁰ Ընկերությունը, մանուկների դաստիարակությունը համարելով հասարակական զարգացման անհրաժեշտ գործոն, նշում է. - «Դաստիարակութեան նպատակն է ստեղծել հարմար միջավայր զարգացնելու երեխայի նորմալ տվյալները, ձգտել ոչ այնքան տալ գիտութեան փաստեր, որքան ստեղծել ընդունակութիւններ, այսինքն զարգացնել հոգեբանութիւնը իրա բազմակողմանի մասերով, չը բաարարելով լոկ ուսումնական տեսակներով, զարգացնել երեխեքի մեջ գիտակցութեան ընդունակութիւն, մտքի տոկունութիւն, որ նա կարողանա անմիջապէս պարզաբանել իրա շրջապատը, ինքնագործունեութիւն և հասարակականութիւն, գեղարուեստական և բարոյական նորմալ տվյալները, տալ ընդհանուր հասկանալի գիտելիքներ զանազան մասնագիտութիւններից իբրև նիւթ երեխայի ինքնուրուն կեանքի, զարգացնել մարմինը»:¹¹

Ընդառաջ գնալով Հանրային կրթության նախարարի առաջարկությանը և նկատի ունենալով ժողովրդական համալսարանների, կիրակնօրյա դպրոցների ու հայոց լեզվի դասընթացների և ընդհանրապես արտադարձակական կրթության տարածմանը կոչված հիմնարկությունների կարիքը, տարրական դպրոցների Ալեքսանդրապոլի շրջանային տեսուչը հրավիրում է զանազան դպրոցների և քաղաքային ինքնավարության ներկայացուցիչների ընդհանուր ժողով: Զննելով արտադարձակական կրթության խնդիրը, ժողովը որոշում է կազմել 11 հոգուց բաղկացած հատուկ հանձնաժողով, որի մեջ ի պաշտոնե մտնում էին նաև շրջանային տեսուչն ու քաղաքի ներկայացուցիչը: Հանձնաժողովը նպատակահարմար է գտնում արտադարձակական կրթության և դաստիարակման գործը բաժանել երեք մասերի՝ ժողովրդական համալսարան, գրաճանաչության դպրոց մեծերի և պատանիների համար և հայոց լեզվի դասընթացներ: Միաժամանակ հարց է բարձրացվում ճշտել այդ գործում հանրային կրթության նախարարության և քաղաքային ինքնավարության փոխհարաբերությունը: Ըստ Քաղաքային ինքնավարության վարչության՝ այդ գործի ուղղակի հսկողությունն ու ղեկավարությունը պետք է լինի իր ձեռքում, և դրա հիմնական պատճառաբանություններն էին.

«ա) Քաղաքային ինքնավարութիւնը ներկայ պայմաններում ներկայացնում է իրենից արելի դեմոկրատական սկզբունքներով ընտրւած մի հիմնարկութիւն, թէ իր կազմով, թէ այն խնդիրներով, որոնք դրուած են ինքնավարութեան առաջ, արելի մօտիկ կանգնած լինելով տեղական կարիքներին, անհամեմատ արելի լավ ձևով կարող է տանել այդ նորաստեղծ գործը:

բ) Քաղաքային ինքնավարութիւնների բազմաթիվ պարտականութիւնների մեջ ամենաառաջնակարգ տեղն է բռնում ժողովրդի կրթութեան գործը, իսկ Ալեքսանդրապոլի ներկայ Քաղաքային վարչութեան գործունեութեան մեջ կրթական գործը ամենակենտրոնական դերն է բռնում, որի համար կրթական գործի բաժինը յանձնւած է Վարչութեան անդամներից մեկին արելի օգտավետ և գեղեցիկ տանելու համար, իսկ Քաղաքային Խորհուրդը որպէս օգնական տուել է Վարչութեան անդամին իր կողմից ընտրւած մասնագետներից յատուկ դպրոցական յանձնաժողով:

⁸ ՀԱՍ ֆ. 105, գ. 1, գ. 2776, թ. 4-5:

⁹ Նույնը:

¹⁰ Նուն տեղում, գ. 2777, թ. 1:

¹¹ Նույնը:

զ) Քաղաքային ինքնավարութիւնը տիրող պայմաններում հանդիսանում է իբրև կենտրոնական իշխանութեան տեղում ավելի հեղինակատր և ազդեցիկ մի օրգան, բնակչութեան բոլոր խավերն էլ դէպի նա վերաբերում են վստահութեամբ և հավատով և նրա բոլոր գործերին ամեն կերպ օգնում են: Քաղաքային ինքնավարութեան շուրջը նման խնդիրներում կարելի է հաւաքել ամեն տեսակի ու հոսանքի մարդկանց, որոնց աշխատանքն ու աջակցութիւնը սոյն և նման գործերում շատ անհրաժեշտ է:

դ) Եւ վերջապէս յանձնելով վերոյիշեալ գործը Քաղաքային ինքնավարութեանը, ավելի նպատակայարմար կերպով կիրականանայ արտադարձական կրթական գործի բոլոր հիմնարկութիւնների հսկողութիւնը: Քաղաքային ինքնավարութիւնը կհանդիսանայ որպէս կանտրոլ այդ գործի թէ ծախսերին և թէ գործունեութեանը և միայն այդպիսի օրգանը, որպիսին է ինքնավարութիւնը կարող է ամբողջովին ունենալ հսկողութիւն թէ կրթական գործի ընթացքի և թէ դասարանների ամբողջ կազմի վրայ»:¹²

Ալեքսանդրապոլի տեղական ինքնավարության մարմինները հատկապէս նախանձախնդիր էին տեղում պետական համալսարանի բացման գործում: Ալեքսանդրապոլի գավառում 1918թ. թուրքերի վարած քաղաքականության հետևանքով ոչ միայն նվազել էր գավառի բնակչության թիվը, այլ փոխվել էր կազմը: Գավառը գրկվել էր երիտասարդ կարող ուժերից: Ալեքսանդրապոլի բնակչության մեծ մասը հեռացել էր քաղաքից, քաղաքում և գավառում հաստատվել էին մեծ թվով գաղթականներ: Առավել ծանր էր տնտեսական վիճակը: Գավառը բառիս բուն իմաստով թալանված էր թուրքերի կողմից: Բնակչության նվազումը, սոցիալ-տնտեսական ծանր վիճակը աղետալի հետևանքներ կարող էին ունենալ Ալեքսանդրապոլի հետագայի համար: Հետևաբար Ալեքսանդրապոլի գավառի տեղական իշխանությունների հիմնական մտահոգությունը գավառի տնտեսական զարգացման և բնակչության քանակի ավելացման խնդիրն էր: Դրա համար կարևոր նշանակություն կարող էր ունենալ մի շարք հիմնարկությունների տեղափոխումը Երևանից Ալեքսանդրապոլ: Այս առումով առանձնահատուկ էր Ալեքսանդրապոլում համալսարանի բացման նշանակությունը: Թեև Հայաստանի կառավարությունը նախատեսում էր համալսարանի բացումը Ալեքսանդրապոլում իրականացնել Երևանում համապատասխան շենքի և բնակարանների սղոթյան պատճառով, այնուամենայնիվ այն կարևոր նշանակություն կարող էր ունենալ Ալեքսանդրապոլի տնտեսական և քաղաքային կյանքի աշխուժացման գործում:

Պատահական չէ, որ երբ 1919 թվականի հոկտեմբերի 16-ին ՀՀ հանրային կրթության նախարարությունը դիմում է Ալեքսանդրապոլի քաղաքագլխին, խնդրելով պարզել, թե հնարավոր է տեղի ուսումնարանների շենքերում ժամանակավորապէս տեղավորել համալսարանը և նպաստավոր պայմաններ ստեղծել համալսարանի գոյության համար,¹³ Ալեքսանդրապոլի իշխանությունները մեծ պատրաստակամությամբ համաձայնվում են համալսարանին հատկացնել առևտրական դպրոցի մի մասը, լուծել դասախոսների բնակարանային խնդիրները և ուսանողական հանրակացարանի հարցը: Ընդ որում, Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ Հ. Մելքոնյանը, ելնելով վերը նշված հանգամանքներից, 1919թ. հոկտեմբերի 30-ին ՀՀ Նախարարների խորհրդի նախագահին գրում է, որ ոչ միայն հնարավոր է, այլ անհրաժեշտ է համալսարանը բացել Ալեքսանդրապոլում:¹⁴ Ավելին, նա առաջարկում է Ալեքսանդրապոլ տեղափոխել մի շարք այլ հաստատություններ ևս, ինչպէս օրինակ՝ փոստ-հեռագրատունը, երկաթուղային, ջրային և գյուղատնտեսական վարչությունները: «Շնորհիվ բոլոր մինիստրութիւնների ու դրանց ճիւղերի կենտրոնացման Երևանում,- գրում է քաղաքագլուխը,- որը իրոք չի յարմարեցված այդ բանի համար, ստեղծել է մի վերին աստիճանի ծանր կացութիւն, որը թէ քաղաքացիներին և թէ ծառայողներին հիմք է տալիս դժգոհելու: Բնակչութեան խտացումը Երևանում բացի անյարմարութիւններից քաղաքացիներին սպառնում է վարակիչ հիվանդութիւնների առաջանալու և այն տարածելու վտանգով և ազդում է մթերքների գնի բարձրացման վրայ: Սեզ թվում է, որ այնպիսի հաստատութիւններ, ինչպիսիք են համալսարանը, երկաթուղին, ջրային, գյուղատնտեսական,

¹² ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2777, ք. 4-5:

¹³ Նույն տեղում, գ. 2798, ք. 1:

¹⁴ Նույն տեղում, ք. 2:

փոստ հեռագրատան վարչությունները, առանց գործին վնասելու կարելի է փոխադրել Ալեքսանդրապոլ, որը աշխարհագրական դիրքով հանդիսանում է Հայաստանի սկիզբը, իսկ առողջապահական և մթերքների էժանութեան տեսակետից ավելի բարեյաջող դրուժեան մեջ է գտնում և կարող է տեղադրել վերոյիշեալ բոլոր հիմնարկները: Առաջարկում ենք կազմակերպել համալսարանի աշխատանքները Ալեքսանդրապոլում: Մեր առաջարկի ընդունման դեպքում ա), շնչասպառ Երևանը կթեթևանա և բ), Ալեքսանդրապոլին կտրի առաջ գալու և զարգանալու հնարավորությունը»:¹⁵

1919թ. դեկտեմբերի 5-ին հանրային կրթության նախարարի զեկույցի հիման վրա Նախարարների խորհուրդը որոշում է համալսարանը ժամանակավորապես Ալեքսանդրապոլում բացել և մինչև 1919-20թթ. ուսումնական տարվա վերջը պարապմունքներն այնտեղ անցկացնել:¹⁶ Ալեքսանդրապոլի տեղական իշխանություններին չի հաջողվում կարճ ժամանակում բոլոր պայմանները ստեղծել համալսարանի համար,¹⁷ և 1920թ. հունիսի 21-ին Նախարարների խորհուրդը որոշում է համալսարանը տեղափոխել Երևան:¹⁸ Ալեքսանդրապոլի քաղաքային խորհուրդը, նրա լիազոր ներկայացուցիչները, հանդես գալով դրա դեմ, հանրային կրթության նախարար Գ. Ղազարյանին ներկայացնում են մի զեկուցագիր, որում համալսարանի տեղափոխումը համարում են վնասակար, գրելով. «Ամբողջ երկրի նյութերը քամել և խտացնել մի կետում, և գավառը արյունաքամ անել, համարում ենք մեծապես վնասակար հայրենիքի համար»: Նույնիսկ առաջարկվում է Ալեքսանդրապոլում գտնվող նախկին ռուսական գորանոցի Պոլիգոնի տարածքը՝ 56 մասնաշենք տրամադրել համալսարանի ֆակուլտետներին, այն դարձնել ուսանողական ավան:¹⁹ Հարկ ենք համարում նշել, որ համալսարանը մի շարք պատճառներով այդպես էլ չվերաբացվեց Երևանում, և միայն Հայաստանի առաջին հանրապետության անկումից և խորհրդային կարգեր հաստատվելուց հետո այն շարունակեց աշխատել՝ 1920 թվականի դեկտեմբերի 17-ին Խորհրդային Հայաստանի լուսավորության ժողովրդական կոմիսար Աշոտ Հովհաննիսյանի հրամանով վերակազմվելով և վերակոչվելով Երևանի ժողովրդական համալսարան:²⁰

Չնայած 1918-1920թթ. Ալեքսանդրապոլի գավառի համար ծանր այդ ժամանակահատվածում կրթական համակարգի զարգացման բազմաթիվ խոչընդոտներին, տեղական իշխանության մարմինները այստեղ զգալի աշխատանք կատարեցին Հայաստանի Հանրապետության կառավարության կրթական քաղաքականության իրականացման ուղղությամբ: Այդ քաղաքականության հիմքում ընկած սկզբնական ընդհանուր, պարտադիր երկսեռ, պրակտիկ և արտադպրոցական կրթության, բնակչության անգրագիտության վերացման և կրթության շարունակականության գաղափարները հետագայում ընկան խորհրդային կրթական համակարգի հիմքում և հետագա զարգացում ստացան խորհրդային տարիներին:

ОРГАНИЗАЦИЯ ОБРАЗОВАТЕЛЬНОГО ДЕЛА В АЛЕКСАНДРОПОЛЬСКОМ УЕЗДЕ В 1918-1920 гг.

___ Резюме ___

___ К. Алексанян ___

В сложных для Александропольского уезда условиях 1918-1920 гг. местные органы власти проделали значительную работу по осуществлению образовательной политики правительства РА.

Местные органы власти воплотили в жизнь такие идеи этой политики, как организация начального, общего, обязательного, совместного,

¹⁵ ՀԱՍ, ֆ. 105, ց. 1, գ. 2798, ք. 3:

¹⁶ Երևանի համալսարան, 1918-1920թթ.(վավեր. ժողովածու), հ. 81, Եր., 1995, էջ 135:

¹⁷ ՀԱՍ, ֆ. 57, ց. 2, գ. 1159, ք. 3:

¹⁸ Երևանի համալսարան, հ. 141, էջ 214:

¹⁹ Նույն տեղում, հ. 138, էջ 209-211:

²⁰ Նույն տեղում, հ. 190, էջ 280:

прикладного, внешкольного и непрерывного образования и ликвидации безграмотности.

Первостепенное значение придавалось организации школьного дела, а также внешкольному образованию и воспитанию детей, посредством организации народных университетов, школ грамотности для пожилых и курсов армянского языка. Городское самоуправление считало себя ответственным за организацию образовательного дела. Особенно последовательными они оказались в вопросе создания в Александрополе государственного университета, считая, что он может иметь существенное влияние как на рост численности населения, так и в решении экономических и политических вопросов.